ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/26

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ
Բողոք բերող՝ «Լեբրոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ տնօրեն՝ Ա. Մկրտչյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Թորոսյանի, Ք. Ղասումյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/06» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Լեբրոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 07.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 07.03.2022թ.-ին:

07.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 համարի ծածկագիրը:

16.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. «Լեբրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեբրոն» ՍՊԸ-ն 07.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ը (այսուհետ նաև Պատվիրատու) 03.03.2022 թվականին հայտարարել է ընթացակարգ թիվ «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով (այսուհետ՝ Ընթացակարգ):

1.2 Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է.

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
						հասցեն	ժամկետը**
1	15110000/1	Միս*	կգ		5000	ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20	առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրի ստորագրման օրից 20-րդ

							օրացուցային օրվանից սկսած 40 օրացուցային օրվա ընթացքում
2	15115400/1	ձիու միս**	կգ		6000	ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20	առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրի ստորագրման օրից 20-րդ օրացուցային օրվանից սկսած 40 օրացուցային օրվա ընթացքում
3	15112110	ընտանի թռչունների միս***	կգ		2700	ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20	առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրի ստորագրման օրից 20-րդ օրացուցային օրվանից սկսած 40 օրացուցային օրվա ընթացքում
4	15113700	ոչխարի միս****	կգ		1300	ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20	առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրի ստորագրման օրից 20-րդ օրացուցային օրվանից սկսած 40 օրացուցային օրվա ընթացքում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

1. Միս*:

Խոշոր եղջրավոր անասունի թարմ բուդ

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ: Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների

նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված՝ միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

*2. ձիու թարմ միս***

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների

նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

*3. ընտանի թռչունների միս****

Հնդկահավի միս

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի,

հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

*4. ոչխարի միս****

Ոչխարի ոսկրոտ միս

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ

Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Բոլոր չափաբաժիններում ներկայացված Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ

Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2- րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսինքն՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է՝

1. ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և

2. համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ինչպես նաև

3. պետք է բացառվի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Հաշվի առնելով վերոնշյալները, գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պայմաններին, որի արդյունքում սահմանված տեխնիկական բնութագիրը առաջացնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Հրավերով Պատվիրատուն պահանջում է, որ միսը լինի խոշոր եղջրավոր անասունի թարմ բուդ, որը գտնում ենք, որ տեղին չէ և դրանով պատվիրատուն առաջացնում է մասնակցության խոչընդոտներ, քանի որ չի հիմնավորում, թե ինչին է պետք, որ միսը լինի միայն խոշոր եղջրավոր անասունի թարմ բուդ:

Կամ

3 չափաբաժնով պահանջվում է ընտանի թռչունների միս, այնուհետև պատվիրատուն նշում է միայն Հնդկահավի միս: Այս պահանջը ևս անհասկանալի է, քանի որ այս դեպքում ևս պատվիրատուն չի հիմնավորում, թե ինչու հնդկահավի միս:

Կամ հրավերով սահմանվել է, որ Հնդկահավի մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների: Այս պահանջը ևս սահմանափակում է մրցակցությունը և չի կարող բավարարել այն կարիքը, որի համար հայտարարվել է մրցույթը, քանի որ մսեղիքի բացառապես թարմ լինելը և յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով, վկայում է այն մասին, որ միսը պետք է լինի տեղական և չի կարող լինել ներկրված, որը չի բխում պատվիրատու կարիքից:

Նաև և որ ամենակարևորն է, Պատվիրատուն հրավերով սահմանել է, որ կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝ թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Այսինքն պատվիրատուն հրավերով մասնակիցների վրա փորձում է դնել այնպիսի պահանջներ, որոնք սահմանված չեն գնումների օրենսդրությամբ: Հատկապես երբ նույն հրավերով արդեն սահմանվել է, որ

1. Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

2. Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Ինչպես նաև պատվիրատուն երբևիցե, նախորդ տարիների գնման ընթացակարգերի ժամանակ, չի պահանջել այս հրավերով սահմանված պահանջները:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «գնման ընթացակարգը:

3. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3911-2022 գրությամբ դիմել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքի

վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 09.03.2022թ.-ի թիվ 9 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում ենք «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքի հետ կապված «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Կենդանաբանական այգի/ դիրքորոշումը, պարզաբանումն ու անհրաժեշտ փաստաթղթերը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» օրենքից և իրավական այլ ակտերից:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված չէ Պատվիրատուի՝ օրենսդրական պարտավորվածություն ընթացակարգի հրավերով նշելու կամ հիմնավորելու, թե, ինչպես ներկայացրել է բողոք ներկայացրած կազմակերպությունը՝ Պատվիրատուի «ինչին է պետք, որ միսը լինի խոշոր եղջերավոր անասունի թարմ բուդ»:

ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Պատվիրատուն, ելնելով իր Կազմակերպության, տվյալ դեպքում Կենդանաբանական այգում պահվող և ցուցադրվող կենդանիների տեսակային և քանակային կազմից, կենդանիների բազմացման, բուծման, գլխաքանակի կարգավորման, խոտանման, քնեցման, հղիության շրջանի, կենդանի քաշի, կշռի, պուբերտացիայի, լակտացիայի և այլ գործոններից, ինքնուրույն է որոշում, թե ինչ քանակի և որակի, շարակցական և հյուսվածքային կազմի, որակական հատկանիշների, անվտանգության նորմերի, ինչպիսի մսի տեսակի կարիք է առկա՝ կենդանու ազդրամիս, թևք, գլուխ, վզիկ, ոտք, վերջույթ, պոչ, ենթամթերք, աղիք, թոք, սիրտ և դրանք ենթարկել փոփոխությունների՝ ըստ անհրաժեշտության, առաջացած կարիքի, կենսաբանական պահանջի, կենդանաբուժական ու կենդանաբուծական մասնագիտական

եզրակացությունների՝ հիմնված այս կամ այն կենդանու կենսաբանական առանձնահատկությունների վրա:

Ուստի կարծում ենք, որ այս մասով ներկայացված բողոքը հիմնազուրկ և փաստազուրկ է:

Հավելենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի հրամանով սահմանված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/06 ծածկագրով գնանշման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանումը, որը բաղկացած է Այգում երկարամյա փորձ ունեցող կենդանաբույծներից, կենդանաբույժներից և հարակից մասնագետներից, մանրակրկտորեն կազմում է տվյալ գնման տեխնիկական բնութագրերը՝ հաշվի առնելով վերոնշյալ նեղ մասնագիտական բոլոր հանգամանքները /պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հայտը կցվում է որպես հավելված 1/: Այսինքն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման կարգավորումները, Կենդանաբանական այգու կարիքների համար գնման հայտի նախագծմանը մասնակցել են Կենդանաբանական այգու՝ ոլորտում ավելի քան 30 /երեսուն/ տարվա աշխատանքային փորձ ունեցող մասնագետները, անձինք, ովքեր իրենց մասնագիտական գիտելիքների և հմտությունների շնորհիվ ունեն համապատասխան կարողություն բնութագրելու Կենդանաբանական այգում պահվող կենդանիներին անհրաժեշտ սնունդը:

Նույնը վերաբերելի է ընտանի թռչունների միս կատեգորիայի՝ հնդկահավի միս բաժնին, մասնավորապես, Պատվիրատուն, ելնելով առկա կենդանատեսակների և գլխաքանակի կենսաբանական պահանջից, ընթացակարգի հրավերում ներկայացրել է տվյալ տեսակի մսի ձեռքբերման պահանջ՝ հստակ սահմանված տեխնիկական բնութագրով:

Բողոք ներկայացրած կազմակերպության պնդումը, թե ներկայացված տեխնիկական բնութագիրը վերաբերում է բացառապես հնդկահավի՝ տեղական լինելուն, նույնպես իրավացի չէ, քանի որ Պատվիրատուն որևէ սահմանափակում չի դրել այլ երկրներից ՀՀ ներմուծված կենդանի հնդկահավի մասով, որը, այլ տարածքներից ՀՀ ներմուծվելուց հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տեղափոխվել սպանդանոց և համապատասխան մորթը հավաստող սերտիֆիկատով՝ Ձև - 5ով, կարող է առաքվել Պատվիրատուին:

Նույն կերպ հնդկահավը կարող է ձեռք բերվել թե՝ տեղական ֆերմերային տնտեսություններից և բուծարաններից, թե՝ միջազգային կամ տեղական շուկաներից՝ ազատ վաճառքում գտնվող թռչունների տեսքով: Այս մասով բողոք ներկայացրած կազմակերպության պնդումը բոլորովին առարկայազուրկ է և անհիմն:

Պատվիրատուի կողմից սահմանված պատասխանատու ստորաբաժանումը պարտավոր է իրականացնել մատակարարվող յուրաքանչյուր խմբաքանակ ապրանքի /տվյալ դեպքում մսեղիքի/ ակնադիտական ստուգում՝ հավաստելու համար ապրանքի համապատասխանելիությունը Պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. ընթացքում «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին Լեբրոն ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է անասնաբուժական-սանիտարական լաբորատոր տվյալներով ներկայացված «անվտանգ մսեղիք»՝ այն է գնման առարկայի բնութագրին համապատասխանող ապրանք, սակայն ակնադիտական և օրգանոլեպտիկ զննությամբ ստորաբաժանումը ողջամիտ կասկածներ է ունեցել մատակարարված ապրանքի՝ մսեղիքի որակական հատկանիշների մասով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ լաբորատոր փորձաքննության կարող էր տարվել այլ միս/ապրանք, իսկ Պատվիրատուին առաքվել այլ միս/ապրանք, ապա Պատվիրատուի կողմից որոշում է կայացվել ներկայացնել ապրանքը առաքող տրանսպորտային միջոցի կապարակնքման պահանջ՝ ապահովելու համար միևնույն մսի առաքումը Կենդանաբանական այգի, որը թե՝ ողջամիտ տրամաբանության, թե՝ ՀՀ գնումների օրենսդրության շրջանակում է:

Ուշագրավ է, որ վերջին 5 /հինգ/ տարիներին Կենդանաբանական այգու մսեղիքի մատակարար է հանդիսացել «Լեբրոն» ՍՊԸ-ն, ում մատակարարված մսեղիք ապրանքից հետո գրանցվել են մի շարք գիշատիչների՝ կատվազգիների և թռչունների արտառոց անկման դեպքեր (անգղներ, վագրեր), ավելին՝ մատակարարված մսեղիքը եղել է վարակված խշխշան պալարով և պաստերելյոզով /հավաստող փաստաթուղթը կցվում է որպես հավելված 2/, որոնք ըստ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված վտանգավոր հիվանդությունների ցանկի՝ համարվում են հատուկ վտանգավոր հիվանդություններ, որոշում է կայացվել իրականացնել մատակարարվող ապրանքի՝ մսեղիքի կրկնաստուգում դրա ողջամիտ կասկածի առկայության դեպքում՝ հակաբիոտիկների, միկոտոքսինների, թունավոր տարրերի և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ՝ ապահովելու համար կենդանատեսակների առողջությունն ու անվտանգությունը, որի իրականացումը Պատվիրատուի կանոնադրական պարտականությունն է:

Կարծում ենք, անվտանգության նկատառումը և Պատվիրատուի կենդանի գույքի՝ հիմնական միջոցների անվտանգության ապահովման, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների պաշտպանության պահանջը չի կարող դիտարկվել որպես ՀՀ գնումների օրենսդրությամբ չսահմանված պահանջ: Բացի այդ, Կենդանաբանական

այգու կարիքները համարվում են պետական կարիքներ: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական կարիքներ են ճանաչվում պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և օրենքով սահմանված կարգով որոշվող Հայաստանի Հանրապետության պահանջմունքները:

Կենդանաբանական այգու կարիքների համար անհրաժեշտ մսեղիքի ձեռքբերման տեխնիկական բնութագիրը կազմվել է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան: Կենդանաբանական այգին առաջնորդվել է իր կանոնադրական նպատակներով և առաջնահերթություններով. այն է՝ կազմակերպել իր կենդանիների համար անվտանգ և որակյալ սնունդի մատակարարում: Կենդանաբանական այգու նշված նպատակով կազմված մսեղիքի տեխնիկական բնութագիրը ոչ մի կերպ չի խախտում «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանաջները. տեխնիկական բնութագրով ոչ մի կերպ չեն խախտվել մրցակցության հավասար պայմանները, չհիմնավորված խոչընդոտներ չեն առաջացել, տեխնիկական բնութագրով առաջադրված պահանջները օբյեկտիվորեն հիմնավորված են և, ամենակարևորը, համարժեք են Կենդանաբանական այգու կարիքների բավարարման նպատակին:

ՀՀ գնումների օրենսդրությունը նաև չի սահմանում՝ երբևէ, նախկինում կամ տարիներ առաջ չսահմանված պահանջը, ներկայումս կամ այլ ժամանակում կամ որպես նոր պահանջ ներառելու սահմանափակում, հատկապես հաշվի առնելով վերջերս Կենդանաբանական այգու կենդանիների քրոնիկ թունավորումների դեպքերը, ինչը կարող է լինել և առաջանալ տարիներ շարունակ սահմանված լողացող, տարամեկնաբանությունների առիթ տվող տեխնիկական բնութագրով ստացված անորակ մսի ստացման և կերակրման հետևանքով:

Հավելենք, որ 2021թ. հոկտեմբեր ամսին, Կենդանաբանական այգու Գործադիր մարմնի՝ տնօրենի փոփոխությամբ պայմանավորված, Կենդանաբանական այգու բյուջեի խոշոր գնման մաս հանդիսացող՝ 81.889.000 դրամ արժողությամբ մսի առաքման պայմանագրի նկատմամբ սահմանվել է խիստ վերահսկողություն՝ բացառելու համար նախկինում տեղ գտած անորակ ապրանքի/մսեղիքի ընդունումը և կերակրումը Կենդանաբանական այգու գիշատիչ կենդանիներին:

Մատակարարված մսեղիքի որակի նկատմամբ վերահսկողություն է իրականացնել այդ թվում ոլորտի լիազոր մարմինը՝ ի դեմս ՀՀ ԿԱ Սննդամթերքի անվտանգության պետական տեսչության, ինչի արդյունքում վերանայվել և փոփոխվել է մսեղիքի տեխնիկական բնութագիրը՝ ապահովելով տարընկալումներից և տարամեկնաբա-նություններից զերծ բնութագիր՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում:

Գտնում ենք, որ Լեբրոն ՍՊԸ-ի բողոքները Կենդանաբանական այգու կողմից կազմակերպված միս ձեռքբերելու ընթացակարգի վերաբերյալ կանխամտածված են և միտում են պարունակում:

Նշվածի փաստարկ է հանդիսանում այն հանգամանքը, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01 և ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05 ծածկագրերով մսամթերք ձեռք բերելու համար նպատակով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգերի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Լեբրոն» ՍՊԸ-ն՝ առաջարկելով շուկայական արժեքից աննախադեպ ցածր գին, սակայն սահմանված ժամկետում այդպես էլ չի կնքել պայմանագրեր: Նշված բոլոր փաստերը ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրված են և ներկայացված են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Համոզված ենք, որ նշված գործողությունները, ինչպես նաև ներկայացված բողոքը միտված են խոչընդոտելու Կենդանաբանական այգու բնականոն աշխատանքը:

Այսպիսով, գտնում ենք, որ ներկայացված բողոքը անհիմն է և առարկայազուրկ, զերծ փաստական և իրավական հիմնավորումներից և այդ իսկ հիմքով՝ ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.03.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/06» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է հետևյալը.

« 1. Միս*:

Խոշոր եղջրավոր անասունի թարմ բուդ:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ: Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված՝ միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

2. ձիու թարմ միս**

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների:

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապա-տասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ընտանի թռչունների միս***

Հնդկահավի միս:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապա-տասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ոչխարի միս****

Ոչխարի ոսկրոտ միս:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապա-տասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Բոլոր չափաբաժիններում ներկայացված Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ,

մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների:

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապա-տասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ

ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինա-բանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի

«ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.03.2022թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, բացի այլ պայմաններից սահմանվել է հետևյալը.

« 1. Միս*:

Խոշոր եղջրավոր անասունի թարմ բուդ:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ: Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված՝ միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

2. ձիու թարմ միս**

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների:

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ընտանի թռչունների միս***

Հնդկահավի միս:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ոչխարի միս****

Ոչխարի ոսկրոտ միս:

Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ, մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Բոլոր չափաբաժիններում ներկայացված Մսեղիքը պիտի լինի բացառապես թարմ,

մարմինը երկատված, առանց ներքին օրգանների, մաշկահանված, մազահանված, առանց ստորին վերջույթների:

Թարմ մսեղիքը պետք է պահված լինի 0◦C-ից մինչև 4◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի:

Մատակարարը պարտավոր է մատակարարվող մսեղիքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել անասնաբուժական–սանիտարական փորձաքննության եզրակացություն՝ բնօրինակով, տրված պետական լիազոր մարմինների կողմից:

Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:

Մսեղիքը պիտք է լինի դրոշմված, յուրաքանչյուր խմբաքանակ պիտի ուղեկցվի սպանդը հավաստող փաստաթղթով՝ Ձև 5-ով:

Մատակարարը պարտավոր է մատակարավող մսեղիքը տեղափոխել հատուկ տրանսպորտային միջոցով՝ հատուկ կահավորված ՝միսը կախելու համար հարմար կախիչներով՝ սառնարանային մեքենաներով: Պահանջվող մսեղիքի հետ չի թույլատրվում տեղափոխել այլ տեսակի մսեղիք և այլ տեսակի ապրանքներ: Տեղափոխումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի օդի շրջանառությունը, համաչափ սառեցում և պահպանվի համապատասխան ջերմաստիճանը ողջ խմբաքանակի համար:

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մսեղիքի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում:

Ապրանքի բեռնաթափումը կատարվում է Մատակարարի կողմից մինչև պահեստային հատված: Բեռնված ավտոմեքենան այգու տարածք կարող է մուտք գործել մինչև ժամը 14:00-ն՝ այգու անվտանգության ծառայության աշխատակիցների թույլտվությամբ և նրանց ուղեկցությամբ:

Ապրանքի հերթական խմբաքանակը մատակարարվում է Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի

փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված «Պատվիրատուն կարող է պահանջել Մատակարարից, ցանկացած կասկած ունենալու դեպքում, կրկնել լաբորատոր հետազոտության արդյունքը ինչպես նույն, այնպես էլ

Պատվիրատուի կողմից նշված այլ լաբորատորիայում՝ թունավոր տարրերի, հակաբիոտիկների, միկոտոքսինների, կարանտինային և այլ հատուկ հիվանդությունների նկատմամբ և պահանջել կապարակնքել միսը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ լաբորատորիայից դուրս գալուց հետո:» պայմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը այդ մասով կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա վերոնշյալ պայմանը չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Վերոնշյալներով պայմանավորված, ինչպես նաև բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը՝ չեն համապատասխանում Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթին, որպիսի պայմաններում հանգեցնում են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմանը, քանի որ առկա բովանդակությամբ (տարակերպ ձևակերպմամբ) չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 21-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգն ենթակա է չկայացած հայտարարման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքը

պետք է բավարարել և պարտավորեցնել «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/06» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**